

## ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Լեզվաբանությունը տակավին չի լուծել գիտության այդ բնագավառի այնպիսի մի կարևոր հարց, ինչպիսին է խոսքի մասերի բնութագրման ու դասակարգման միասնական հիմունքի հարցը, կամ էլ այն «լուծված» է համարել հավատ չենք ընդունում այնպիսի պնդմամբ, թե «...խոսքի մասերի հատկությունները բազմազան են, և այս կամ այն լեզվի խոսքի մասերի սխեմաները զրկված է բաժանման միասնական հիմքից...»<sup>1</sup>:

1954 թվականի հունիս ամսին խոսքի մասերի դասակարգման հիմունքի հարցին նվիրված ՍՍՀՄ ԳԱ-ի լեզվագիտության ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստում դ-ր Ս. Բ. Շապիրոն այսպես ասաց. «Արդեն շուրջ հարյուր տարի է, ինչ բառերի դասակարգման հարցը ուսաց լեզվում հանդիսանում է ուսա քերականության լուծված հարցերից մեկը»<sup>2</sup>:

Ամփոփելով նույն դիսկուսիայի արդյունքները՝ ՍՍՀՄ ԳԱ-ի թղթակից-անդամ Ս. Գ. Բար-խուդարովը նկատեց, որ, ինչպես զեկուցումներում, այնպես էլ ելույթներում, խոսքի մասերի դասակարգման հիմունքի առաջ քաշած երկու տեսակետներն էլ, ըստ էության, չհիմնավորվեցին<sup>3</sup>:

Լեզվի բառերի դասակարգումը առանձին հանդիպողովող խմբերի առաջին անգամ կատարել են հին հույները, որոնց հիմնական նպատակը «տեքստերի վերլուծումն ու մեկնաբանումն էր: Ուրեմն՝ հին հույների քերականությունը հիմնականում տեքստաբանական նպատակ ուներ, որ-պիսի հանգամանքը չէր կարող չազդել նրա բնութագրի վրա»<sup>4</sup>:

Այնուհետև քերականագիտությունը մնաց դատապարտված հին հույների մտածողության կարծրացած այս կեղևի մեջ, որից դուրս գալու ջանքերը (ամեն անգամ թելադրված նոր ժամա-նակները բերումներով ու աշխարհայացքով) հարցը իր նախնական կետից շատ աննշան չա-փով տեղաշարժեցին:

Մեր կարծիքով՝ տակավին տեքստաբանական նպատակներով է առաջնորդվում ակադեմիկոս Լ. Վ. Շչերբան նույնպես, երբ գրում է. «Քանի որ դարձյալ մենք գործ ունենք ոչ դասակարգման հետ (Շչերբան գտնում է, որ բառերը ըստ խոսքի մասերի դասակարգումը կամայական բնույթ ունի, կարելի է, օրինակ, դրանք բաժանել նաև «հաճելի էմոցիաներ առաջացնող» և «անտարբեր» խմբերի — Գ. Ս.), հարկ չկա նեղվել, որ որոշ բառեր երբեք չեն տեղավորվի (подойдут), նշա-նակում է՝ դրանք մի կողմից իսկապես չեն ներառվում ոչ մի կատեգորիայի տակ: Այդպիսիք են, օրինակ, այսպես կոչված միջանկյալ բառերը, որոնք հազիվ թե կազմում են որևէ պարզորոշ կատեգորիա, ի միջի այլոց, հարաբերակցականության բացակայության պատճառով»<sup>5</sup>:

Այսպիսի մոտեցմամբ տրամաբանական կլինեին խոսքի մասի որևէ կատեգորիայի տակ ձայ-նարկությունները նույնպես շառնելը. ավելին՝ կապերը և շաղկապները, քանի որ դրանցից առա-ջինը, իսկապես, զուրկ է հարաբերակցականությունից ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես «միջան-կյալ բառերը», իսկ վերջիններն էլ, թեև հարաբերում են բառեր, բայց իրենք զուրկ են «հարա-բերակցականությունից»:

Բառերը՝ ըստ խոսքի մասերի դասակարգման այս մոտեցումը ավելի հետևողականորեն է կիրառում ֆրանսիացի նշանավոր լեզվաբան Ժ. Վանդրիեսը, որը խոսքի մասերից առաջին հեր-թին դուրս է մղում ձայնարկությունները, որովհետև դրանց մեջ էլ կա «ինչ որ բան». որ նրանց պայմանավորում է մյուս խոսքի մասերից, ապա կապերն ու շաղկապները, որովհետև սրանք էլ սոսկ ձևություններ են, և որոնց դերն էլ կարող է իրացվել այլ միջոցներով: Դերանուններն առանձին

<sup>1</sup> «Большая Советская Энциклопедия», т. 47, стр. 62.

<sup>2</sup> «Вопросы языкознания», 1955, № 1, стр. 63.

<sup>3</sup> Там же, стр. 165.

<sup>4</sup> Ս. Գ. Բարխուդարյան, Ժամանակակից հայերենի շեղվող խոսքի մասերը, էջ 63:

<sup>5</sup> Л. В. Щербан, Работы по русскому языку, Учпедгиз, 1957, стр. 66.

խոսքի մաս չեն կազմում, որովհետև սրանք երբեմն անվան, թվի ու սեռի ցուցումներ են, երբեմն էլ՝ խաղում են գոյականի դեր, և պետք է տեղավորվեն գոյականների շարքում, թեև հաճախ խաղալով բացասական ձևությամբի դեր՝ մոտենում են վերջիններին, և վանդրիեսը, ըստ երևույթի, դեմ չէր լինի նաև այն բանին, որ դերանունները համարվեին ձևությամբ և վերջնականապես ու նույնպես արտաքսվեին խոսքի մասերի շարքից։ Ածականները շատ հաճախ գործածվում են գոյականաբար, ուրեմն՝ պետք է մտցվեն վերջիններին մեջ մի ընդհանուր անվան տակ. նույն բախտին պիտի արժանանան թվականներն ու մակբայները, որոնց մասին նույնիսկ չի էլ ակնարկել հեղինակը<sup>6</sup>։

Մենք այստեղ հարկ չենք համարում բերել եվրոպական և ռուսական այլ լեզվաբանների դատողությունները խոսքի մասերի դասակարգման հիմունքների մասին, քանի որ դրանք, ըստ էության, չեն տարբերվում արդեն իսկ բերվածներից։

Հայ լեզվաբանության մեջ մինչև պր. Գ. Սևակի «խոսքի մասերի ուսմունքը» աշխատությունը՝ տիրապետող էր դասակարգման տրադիցիոն սկզբունքը։ Աշխատության հրապարակումից հետո նոր մոտեցումը հին սերնդի ներկայացուցիչների կողմից ընդունվեց սկսապիկորեն։ «Ժամացաբանական քերականության» մասին մի առանձին աշխատություն ունի Գ. Սևակը՝ «խոսքի մասերի ուսմունքը» վերնագրով, բայց այստեղ էլ կա միայն հին սխտեմի քննադատությունը, հերքումը, բայց թե ինչ էր իր առաջարկելիքը նոր ձևը, բնավ հայտնի չէ<sup>7</sup>։

Նոր սերունդը ոգևորությամբ ընկալեց առաջադրված սկզբունքը և սակայն դրա կիրառման գործում հաճախ ցուցաբերում է վարանումներ, տարակուսանքներ։

Ի միջի այլոց նկատենք, որ հենց այդ տարակուսանքներին է «պարտական» Գ. Գարեգինյանը իր «Շաղկապները ժամանակակից հայերենում» աշխատության մեջ, երբ «հետևաբար», «հետևապես», «ուստի», «այնուամենայնիվ», «ըստորոմ», «համենայն դեպս» և նման շատ այլ բառեր, որոնք ակնհայտորեն եղանակավորող բառեր են, «երբ» դերանունը է այլն, համարել է շաղկապներ ու առաջացրել այնպիսի մի շփոթ, երբ մարդ հարկադրված կողմնորոշվում է «պատեհ առիթով»։

Հիմնականում ընդունելով պրոֆ. Գ. Սևակի կոնցեպցիան, գտնում ենք, սակայն, որ այն իր տրամաբանական ավարտին չի հասցված, ինչպես իրավացիորեն նկատել է պր. Հ. Աճառյանը, և դա իր արտահայտությունն է գտել հատկապես սկզբունքի գործադրման մեջ։

Որևէ լեզու վերացարկված արտահայտությունն է այդ լեզվի բառապաշարի և քերականական կառուցվածքի ամբողջության։ Հայերեն լեզուն, օրինակ, հաց, դու, և, գնալ, վեց, այո, գեղեցիկ, օֆ և այսպես հայերենի ամբողջ բառապաշարի ու դրանցով խոսք կառուցելու քերականական միջոցների ամբողջությունն է։

Այս իմաստով, կա՞ հայոց լեզու կոնկրետ խոսքից դուրս, այսինքն՝ օրինակ՝ Արամի հետևյալ խոսքից դուրս. «Մայրի՛կ, ես գնում եմ դպրոց»։ «Կա՞» հարցին այս դեպքում որոշակի պատասխան տալուց առաջ մտորենք հետևյալ «կա»-ի պատասխանը. կա, «մարդ» կոնկրետ Արամից, Հենրիետից, Ժանից, Պավլից, Յան-Սուից և միլիարդավոր ու միլիարդավոր կոնկրետորեն ապրած, ապրող, ապրելու սպասող մարդկանցից դուրս մի գոյ, որը ներկայացնեն բոլոր մարդկանց «միջինը»՝ ոեւալ մի կեցութայն ձևով։ Այսպիսի ոեւալ կոնկրետությամբ չկա մարդ, չկա և «միջին» կոնկրետ հայերենը, կա վերացարկված (աբստրակտ) մարդ, վերացարկված հայերեն, որոնք, ինչպես լենինն է ասել «նույնքան օբյեկտիվ են», որքան Արամն ու նրա կենդանի խոսքը։

Ահա այն բառը, որը կոնկրետ խոսքից դուրս է, որոշակի իմաստի արտահայտություն և հասկացություն է, նաև խոսքի մաս է (հիշենք այս տերմինի պայմանականությունը, որը զալիս է հին հույներից)։ Նույն բառը կոնկրետ խոսքի մեջ դադարում է հասկացություն ու խոսքի մաս լինելուց և ապրում է իր իսկական գոյը՝ որպես նախադասության անդամ, «ընթացիկ (թուցիկ) մտա-դատողության» անդամ<sup>8</sup>, նույնպես և պատկանելիության քերականական կատեգորիան, օրինակ, կոնկրետ խոսքից դուրս պատկանելիության վերացարկված (աբստրակտ) հասկացություն է, սակայն, «Արամի գիրքը նոր է» նախադասության մեջ «ի»-ի պատկանելիության հարաբերությունը ապրում է իր իսկական գոյը։

Ուրեմն՝ քերականական կատեգորիաները, ինչպես է խոսքի մասային կատեգորիան, արքստրակցիաներ են, որոնք իրենց մարմնավորումն են վերագտնում կոնկրետ խոսքի մեջ, որտեղ և վերածվում են «զգայական իրողությունների»։

6 Ж. Вандриес, Язык, Москва, 1937, стр. 114—115.

7 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր 3, էջ 20.

8 Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի դասընթաց, 1955, էջ 226.

Այսպիսով ուրեմն՝ բառը խոսքից դուրս արատրակցիա է. մտածողության թագավորության անդամ, լեզվի անդամ, խոսքի մեջ՝ նախադասության անդամ, զգայական ընկալման մեջ գտնվող առարկայի, հատկանիշի արտացոլումը:

«Լեզվի մեջ — ուշադրություն դարձրե՛ք՝ ոչ խոսքի մեջ (Վ. Ս.), — կա միայն ընդհանուրը»<sup>9</sup> — գրում է Լենինը:

Խոզ թույլ տրվի ավելացնելու՝ խոսքի մեջ կա միայն եզակին, կոնկրետը, զգայականը:

«Մարդ», «գալ», «տուն» բառերը խոսքից դուրս ընդհանուր, վերացարկված գաղափարներ են: «Մարդ (կամ մարդը) եկավ տուն» նախադասության մեջ բոլոր բառերն էլ իջել են գաղափարների աշխարհից և ապրում են կոնկրետ զգայական կյանքով: «Մարդ» բառը, որքան էլ գաղափարների թագավորության մեջ ընդհանուր արտահայտողի դերում հանդես գա, այս դեպքում (տվյալ նախադասության մեջ) զգայական ընկալման ոլորտում է, ուրեմն և՛ կոնկրետ մարդ է, որն ընկալվում է այդ միտք-նախադասությունն արտաբերողի կողմից: «Եկավ»-ը արդեն «գալ»-ու գաղափար չէ, այլ կոնկրետ մի պրոցես, գործողություն, որ նույնպես զգայական ընկալման ոլորտից դուրս չէ: Կոնկրետի և վերացականի փոխհարաբերության հստակ ըմբռնման բացակայությունից է, որ բուրժուական լեզվաբանության մեջ առաջացել է բառի տվյալի փոխարինող հատկանքը (Պոտերնյա, Ֆոսլեր, Վանդրիես, Կառնաու և ուրիշներ):

Վ. Ն. Սվյանսկիով-Կուլիկովսկին, բաժանելով Պոտերնյայի և այլոց կարծիքը՝ գրում է. «Իսկական կենդանի բառը դա այն է, որ դուք հենց հիմա լսեցիք... Ուրիշի կողմից օգտագործված, այդ բառը արդեն կլինի ուրիշ, նա արդեն օգտագործված ձեր կողմից մի ուրիշ անգամ, այլ պարզապես գրում, նորից կլինի այլ»<sup>10</sup>:

Նույն հարցի առնչությամբ Ժ. Վանդրիեսը գրում է. «Նրբեք նույն բառը երկու անգամ չի օգտագործվում ճիշտ և ճիշտ նույն նշանակությամբ»<sup>11</sup>:

Բերված դատողությունները փաստի սոսկ արձանագրումներ են: Իսկապես, մեկի «գնալու» գործողությունը («Վարդգեսը գնաց») երբեք չի կրկնվում նույնությամբ ոչ այդ մեկի, և ոչ էլ մեկ ուրիշի կողմից, ինչպես և կոնկրետ ծաղիկը (ահա այս վարդը) իր մանրամասնություններով կրկնություն չէ անսահմանորեն մեծ թվով նույն տեսակի ծաղիկներից և ոչ մեկի. յուրաքանչյուր «գնալ» ու յուրաքանչյուր ծաղիկը անկրկնելի են, ուստի և չի կարող դրանց արտապատկերումը, որը կատարվում է խոսքի միջոցով, շուրջնալ այդ եզակի կոնկրետության նշանակությունը: «Մարդը հասարակական կենդանի է» խոսքը սեք, թվում է, բոլոր բառերն էլ բացարձակապես զուրկ են կոնկրետությունից: Սակայն այդպես միայն թվում է. երբ ես բերված կոնտեքստում օգտագործեցի «մարդ» բառը, անպայման նրա ընդհանուր իմաստի հետ կապեցի ընկալման իմ զգայական պատկերը, այդ հասկացության ըմբռնման իմ առանձնահատկությունները, ուստի և ամեն ինչ, ինչ ես գնում եմ «մարդ» բառի մեջ, ինչ-որ չափով տարբեր է այն ամենից, ինչ դրա մեջ կենդանի մեկ ուրիշը. իսկ դա ճիշտ այնպես է. ինչպես մեղվապարսի յուրաքանչյուր մեղու, մյուսների հետ ունեցած մարդու համար անորոշալի ինդիվիդուալ տարբերությունների, ունի մեկություն երևացող ընդհանրություններ: Ծիշտ այնպես, ինչպես յուրաքանչյուր մեղվի ինդիվիդուալ տարբերությունները չեն սասանում այն հիմքը, որով դրանք կենդանական աշխարհի մի տեսակի մեջ են ամփոփվում, այդպես էլ յուրաքանչյուր բառի կոնտեքստային «մտա-դատողական» ընթացիկ (թողցիկ) կոնկրետությունը չպետք է խանգարի վերանալու դրա մանրամասներից և բառը համարելու ընդհանրական բովանդակության արտահայտիչ: Մենք ընդունում ենք աշխարհի բոլոր մեղուների մեկությունը, կա՝ օբյեկտիվորեն այդ մեկությունը. իհարկե, բա միթե՞ բոլոր մեղուների ունեցած ընդհանրությունների ամբողջությունը նույնքան օբյեկտիվ չէ, որքան դրանց առանձնահատկությունները... Եթե այդպես չլինեք, մարդն ստիպված պետք է լիներ յուրաքանչյուր մեղվի կոչել մի առանձին անուն-բառով:

Մեր քննության իմաստն այս է. բառերը որպես խոսքի մաս, բնութագրվում են կոնկրետ խոսքից, նախադասությունից դուրս, բառարաններում, որտեղ դրանք զգայաթափ վերացարկումներ են, և որտեղ, բացի այդ, եթե մտովի չկապվեն խոսքի հետ, չի էլ կարելի որոշել նույնիսկ դրանց ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները, էլ ո՛ր մնաց, թե վերջիններով հնարավոր լինե՞ր սահմանել սրանց խոսքի մասային ստորակարգումները: Իսկ բառարան-

<sup>9</sup> Ленинский сборник, т. XII, стр. 222.

<sup>10</sup> Д. Н. Овсянников - Куликовский, А. А. Потебня — как языковед-мыслитель, Киев, 1893, стр. 16—17 (վերցված է Л. О. Резников «Понятие и слово» աշխատությունից):

<sup>11</sup> Ж. Вандриес, Язык.

ներում բառերն ունեն միմիայն իմաստ. իմաստի ընդհանրությունն էլ այն հիմքը պետք է ծառայի. որով դրանք կատարակարգվեն թխտքի մասս հասկացությունը:

«Հիսուն», «քաջարի», «ընկենի», «գինվորներ», «հերոսաբար» բառերից յուրաքանչյուրը երկվակայության մեջ հայտնված հիշողության պատկեր է՝ նյութական աշխարհի օբյեկտիվ պրոցեսի, քանակական ու որակական որոշվածությունների, որոնք ինքնին դուրկ են կապից. սուբյեկտը կապում է այդ հասկացություններն այսպես. «Հիսուն քաջարի գինվորներն ընկան հերոսաբար»: Այն, ինչ տեղի ունեցավ այդ բառերի հետ, սուբյեկտիվ ապրումի ակտի արտահայտություն է, «մտածում» է, որ հնարավոր է բացառապես մարդկային ուղեղում, ուստի և սուբյեկտիվորեն:

Մտածել, ուրեմն, նշանակում է օբյեկտիվ աշխարհն առնել ակտիվ արտացոլման ոլորտը, աշխարհը «վերստեղծել» մարդու ուղեղում, մարդկայնորեն: Մտածողության նյութը տրվում է արտաքին աշխարհից, մտածվում է, սակայն, սուբյեկտիվորեն, մտածվում է բառերով և միտքը թանձրանում է լեզվի միջոցով. աշխարհն ու սուբյեկտը լեզվի մեջ ձուլվում են. մտածելու համար՝ հենց մտածողության հետ ստեղծվում են բառեր՝ արտաքին աշխարհը արտապատկերելու, և բառեր «ինքնին կապերից դուրկ» աշխարհի պատկերները կապի մեջ դնելու համար:

«Ինքնին կապերից դուրկ» դատողությունը չպետք է, իհարկե, հասկանալ այնպես, թե դրանով ասվում է, որ, օրինակ, օբյեկտիվորեն չկա բույս, լույս, արև և այլն, փոխկապակցությունը. դա հարցի փիլիսոփայական ըմբռնումն է, որն այժմ մեզ չի զբաղեցնում. մեզ հիմա հետաքրքրում է աշխարհաբանական լեզվա-մտածողական սպեցիֆիկումը. այս իմաստով էլ, կրկնում ենք, մտածել, նշանակում է աշխարհի օբյեկտների, պրոցեսների, քանակական ու որակական որոշվածությունների օբյեկտիվ կապերը (փիլիսոփայորեն դասելով) բացահայտել սուբյեկտիվորեն (լեզվակա-իմացաբանական սպեցիֆիկումի տեսանկյունից դատելով): Այստեղից էլ՝ պետք է, ուրեմն, լինելին բառեր, որոնցով արտապատկերվեք աշխարհը, և բառեր, որոնք աշխարհի սուբյեկտիվ-զգայական ընկալման համար «կապերից դուրկ» պատկերները կապեն միմյանց:

Որևէ լեզվի բառապաշարը, ուրեմն, բաժանվում է հանդիպադրվող հետևյալ մեծ խմբերի՝

1. Օբյեկտիվ բովանդակության բառեր, որոնք արտապատկերում են սուբյեկտից դուրս գոյություն ունեցող աշխարհի գոյերը, պրոցեսները, քանակական ու որակական որոշվածություններ (գոյական, թվական, ածական, բայ, մակբայ). դրանք էլ կազմում են մտածողության նյութական բովանդակությունը:

2. Սուբյեկտիվ բովանդակության բառեր, որոնք մտածողության ակտի միջոցներ լինելով՝ սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտություններ են՝ գոյերի, պրոցեսների, քանակական և որակական մեծությունների ու դրանց կապերի վերաբերյալ (կապ, շաղկապ, ձայնարկություն ու տրամաբանություն):

3. Բառերի մի խումբ, որ ինքնին սինթետիկ է օբյեկտ-սուբյեկտ հարաբերությունը՝ ունենալով և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ բովանդակություն (դերանուններ):

Այսպիսով՝ բառերի այնպիսի խմբեր, որոնք հանդիպադրվում են՝ օբյեկտիվ աշխարհի գոյերը, պրոցեսներ, քանակական և որակական մեծություններ օբյեկտիվորեն կամ սուբյեկտիվ հարաբերությամբ ցույց տալու, ինչպես և դրանց կապերի նկատմամբ սուբյեկտիվ վերաբերություններ ու սուբյեկտիվորեն՝ օբյեկտիվ հարաբերություններ բովանդակելու ընդհանրությամբ, կոչվում են խոսքի մասեր:

Սահմանումը պարզաբանենք արդեն բերված օրինակով. «Հիսուն քաջարի գինվորներն ընկան հերոսաբար». այս նախադասություն-մտքի մեջ շարահյուսված բառերն ունեն օբյեկտիվ բովանդակություն. «Հիսուն» բառը նշում (ցույց է տալիս) «գինվորներ» գոյերի օբյեկտիվ քանակը, «քաջարի»-ն՝ դրանց որակը, «ընկան»՝ գոյերի հետ տեղի ունեցած պրոցեսը, իսկ վերջին («հերոսաբար») բառով ցույց է տրվում հիշյալ պրոցեսի որակական որոշվածությունը՝ նույնպես օբյեկտիվորեն: Ուրեմն՝ բոլոր բառերի բովանդակությունն էլ սուբյեկտից դուրս գտնվող օբյեկտիվ աշխարհի իրերի, պրոցեսների ու դրանց որակական ու քանակական մեծությունների օբյեկտիվ արտապատկերումներ են, մարդկայնորեն պատճենավորված արտացոլումներ: Շարահյուսական կապերի մեջ, սակայն, կան սուբյեկտիվ հարաբերությունների մի շարք դրսևորումներ. այսպես՝ «գինվորներ» բառի վերջահար «ն»-ն նշում է դոյերի՝ սուբյեկտին հայտնի լինելը, իսկ բայի անցյալ կատարյալ ժամանակը, որ նշում է խոսքի մոմենտի հարաբերությունը գործողության ընթացքին, օբյեկտիվ-սուբյեկտիվ հարաբերություն է: Կոնկրետ խոսքը, ինչպես արդեն ասել ենք, սուբյեկտիվ ապրումի ակտ է, որը դրսևորում է մեր դեմ-հանդիման կանգնած աշխարհի և այն արտացոլող սուբյեկտի հակադրամիասնությունը:

Վերցնենք նույն իրականության մի այլ արտապատկերում. «Այո՛, այսքան այսպիսի զինվորներ այդպես եղան հերոսաբար»։ Խոսքը քերականորեն ճիշտ է կառուցված (ոճական անհարթությունները զանց առնենք)։ Միևնույն իրողության վերջին արտապատկերումը կըմբռնվի միայն առաջին «նկարի» ֆոնի վրա։

«Այսքանը» հիսուն իրականության մի այնպիսի նկարահանում է, երբ հանդես է բերվում զինվորների քանակական որոշվածությունը սուբյեկտի (նկարահանողի) հարաբերությամբ։ «Հիսուն»-ն «այնքան» է, որովհետև սուբյեկտին հայտնի է այդ, օբյեկտ-սուբյեկտի այս հարաբերությունից դուրս (ոչ խոսքից), «այսքան»-ը անիմաստ է։

«Այսքանը» ո՛չ խոսքից դուրս, և ո՛չ էլ խոսքի մեջ անորոշ, վերացական մեծություն չէ, ինչպես կարծում են որոշ լեզվաբաններ, «այսքանը» հիսուն է (կամ ցանկացած մի այլ մեծություն), որն այդքան է՝ սուբյեկտին հայտնի լինելու պայմանով։ «Գնեցի հինգ մատիտ» և «Ինձ պետք էր այդքան մատիտ»։ այս մտքերի կապի մեջ անհրաժեշտաբար տրված է «այսքանի» որոշակի մեծությունը. հիշյալ կապակցության մեջ դա հինգ է և ոչ թե, ասենք, չորս։ Խոսքից դուրս էլ «այսքանը» ենթադրում է օբյեկտ-սուբյեկտի հարաբերությունը։ Երբ արտաբերում ենք այդ բառը, ապա ընկալում ենք մի մեծություն, որը հայտնի է իր կոնկրետությամբ. «այդքան» նշանակում է (բովանդակում է) ինձ (սուբյեկտիս) հայտնի չափ։ «Այս» բաղադրիչը նշում է թվի՝ սուբյեկտին հայտնի լինելը, «քան»-ը նրա մեծության սահմանը (կոնկրետությունը)։

Ուրեմն՝ ինչ է «հինգ» թվականի և «այսքան» դերանվան որակական տարբերությունը, որով նրանք հանդիպադրվում են որպես տարբեր խոսքի մասեր. ա՛յն, որ «հինգ» թվականը գոյի քանակական մեծությունը ցույց տալով՝ նշում է դրա օբյեկտիվ բովանդակությունը՝ անկախ սուբյեկտի վերաբերությունից, իսկ «այդքան»-ը ցույց տալով նույն բովանդակությունը, ներառում է սուբյեկտի հարաբերությունը՝ որպես այդ բովանդակության կոնկրետացման միջոց։

«Սա» մի գոյ է, որը ոչ միայն զգայական ընկալման ոլորտումն է. ես չեմ անվանում այդ գոյը, որովհետև ու նաև այն իմ զգայարանների միջոցով հենց այժմ արտացոլվում է, և ես տեսնում, շոշափում, հոտոտում, համտես եմ անում և այլն, այն, որ, ասենք, հաց է։

«Սա զորվեց», զորվեց այն, ինչ ինձ հայտնի է և դա ԲԱՐ է։ ՔԱՐ — օբյեկտիվ գոյ է՝ օբյեկտիվ արտացոլմամբ, սա՛՝ օբյեկտիվ գոյ՝ սուբյեկտիվ արտացոլմամբ, որի ինքնությունը տրված է սուբյեկտին հենց այդ հարաբերության մեջ, և այդ հարաբերության միջոցով։

Այսպիսով, եթե գոյականը, թվականը, ածականը, բայը, մակբայը ցույց են տալիս (բովանդակում են) սուբյեկտից անկախ օբյեկտիվ աշխարհի գոյեր, պրոցեսներ, քանակական ու որակական որոշվածություններ օբյեկտիվ, շփոթորկավորված պատճենավորմամբ, ապա համապատասխան դերանունները օբյեկտիվ աշխարհի նույն իրողությունները արտապատկերում են սուբյեկտիվ բեկմամբ, պատճենավորողի հարաբերությամբ, կոնկրետանում օբյեկտ-սուբյեկտ կապի մեջ, այդ հարաբերության սահմաններում։

Բառերի արտահայտված իմաստի օբյեկտիվության ու սուբյեկտիվ հարաբերությամբ այն (իմաստը) դրսևորելու հարցին ուշադրություն է դարձրել Ա. Ա. Պոտեբնյան, որի կարծիքով, սակայն, դերանուններից ոչ բոլորն են, որ օբյեկտը մատնանշում են միջնորդավորված կերպով, սուբյեկտիվ հարաբերությամբ<sup>12</sup>։

Լեզվաբաններից շատերը դերանունները բնութագրելիս առաջին հերթին նկատի են առնում դրա արտահայտած իմաստի վերացականությունը. ալոպիսի մոտեցմամբ նրանք հեշտությամբ դերանուն են համարում նաև народ, вещь, душа և դրանց նման գոյականները<sup>13</sup>, ինչպես նաև данный, известный, определенный բառերը<sup>14</sup>։

Թյուրիմացությունը սկիզբ է առնում այն պարագայից, որ դերանունների բնորոշ հատկանիշը համարվում է բովանդակության արտահայտման վերացականությունը և ոչ օբյեկտ-սուբյեկտի կապի դրսևորումը. ճիշտ է, որ «ես» դերանունը կարող է փոխարինել ցանկացած անձի կոնկրետ անունը, առանց տարբերակման, սակայն պարզ է, որ վերջին հանգամանքը հետևանք է այն բանի, որ տվյալ պահին ես-ի տակ ներկայացող անձնավորությունը առնված է իր իսկ խոսողի զգայական ընկալման ոլորտը։

Դերանունը մարդու մոտ միշտ առաջացնում է անմիջական (և ոչ ասոցիատիվ) մտապատկեր, ու հենց այդ էլ նրա կոնկրետ բովանդակություն ունենալու օգտին է խոսում։ Դերանվանը հատուկ է ո՛չ թե բովանդակությամբ, այլ ձևի ընդհանրությունը «սա»-ն (կամ մի այլ դերանուն)

<sup>12</sup> А. А. Потебня. Из записок по русской грамматике, 26.

<sup>13</sup> В. В. Виноградов, Русский язык, 325.

<sup>14</sup> А. М. Пешковский, Русский синтаксис, 142.

մի ձև է, որն իր վրա (կամ մեջ) կարող է վերցնել ցանկացած կոնկրետ բովանդակություն: Ձևի ընդհանրականությունը չպետք է շփոթի խոսքի մասը բնութագրելիս, քանի որ մենք այս դեպքում ի նկատի ենք առնում բառի բովանդակությունը միայն:

Մեզ միշտ էլ անհավանական է թվացել այն պարագան, երբ անտեսվել է դերանվան ու բայի կապը: Ըվ, իսկապես, ինչպե՞ս կարող էր բայը, որ ցույց է տալիս գոյի օրյեկտիվ պրոցեսը օրյեկտիվորեն, իր արտահայտությունը չգտնել սուբյեկտիվ հարաբերության կապի մեջ:

Որ բայը նույնպես իր օրյեկտիվ բովանդակությունը կարող է դրսևորել սուբյեկտ-օրյեկտի հարաբերությամբ, նկատվել է լեզվաբաններից մի քանիսի կողմից. «Что делать» — что это выражение, действительно, представляет одно целое местоимение, видно из того, что в ответе на этот вопрос слово делать не повторяется и не подразумевается, например: что ты делаешь? — Читаю, а не делаю чтение или делаю читать»<sup>15</sup>.

Լեզինակը, սակայն, դրանք համարում է դերանվանական սուռոգատներ. տեսնենք իրո՞ք այդպիսիք են, թե՛ իսկական դերանուններ:

Տղան ֆայլում է: Նա այդպես է անում:

Տղան դում է: Նա այդպես է անում:

Տերևը դեղնել է: Նա այդպես է եղել:

Կարծում ենք, որ բերված օրինակներից ակնառու է այն հետևությունը, թե հավասարության աջ մասի գործողություն ու եղելություն արտահայտող բառերը իրենց բովանդակությունը դրսևորում են ուղղակի պատճենավորմամբ, իսկ ձախ մասի բառերը՝ նույն բովանդակությունն արտահայտում են միջնորդավորմամբ, սուբյեկտի հարաբերությամբ:

Ո՞վ է «ես»-ը. բոլոր մարդիկ, որոնք խոսում են և իրենց անձը (գոյություն ունեցողը — գոյականը) նշում են իրենց (կամ խոսակցի) հարաբերությամբ. ի՞նչ պրոցես է «այսպես անել»-ը. բոլոր գործողությունները, որոնք նշվում են խոսողի (սուբյեկտի) հարաբերությամբ: «Այսպես արեցի» իսկ թե, իսկապես, ինչպես արեցի, դա հայտնի է ինձ՝ խոսողիս (նաև խոսակցիս), «այսպես արեցի» գրեցի, կարդացի, քայլեցի, մտա, վիճեցի, քանդեցի, դրանցից մեկն ու մեկը տվյալ պահին, խոսքի մոմենտին: Ըվ սա նման է այն բանին, ինչ մենք հասկանում ենք «այսպիսին» (կաբժի, տհաճ, ոսկե, երկրալիճ, և այլն) սուբյեկտ-օրյեկտ հարաբերության մեջ:

«Այսպես անել», «այդպես անել», «այնպես անել», «այսպես եղավ» և այլն բայական դերանուններ են, որովհետև դրանք ցույց են տալիս պրոցես, գործողություն կամ եղելություն սուբյեկտիվ հարաբերությամբ, միջնորդավորված կերպով:

«Անել», «լինել», «վարվել» բառերն առանց այսպես, այդպես, այնպես և այլ բառերի հետ բաղադրության մեջ մտնելու էլ պրոցեսը՝ գործողություն կամ եղելություն, ցույց են տալիս սուբյեկտիվ հարաբերությամբ, այդ պատճառով էլ, թերևս, դրանք կոչվել են վերացական բայեր. այնպես ի՞նչ պետք է հասկանալ «վերացական բայ» հասկացողության տակ, եթե ոչ այն, «վերացականությունը», որը նկատելի է բոլոր դերանունների միջ որպես դրանց առանձնահատկություն:

Այժմ անցնենք մի այլ հարցի:

«Այո», հիսուն քաջարի զինվորներ ընկան հերոսաբար, ավաղ...»: Ի՞նչ են ցույց տալիս «այո» և «ավաղ» բառերը այս նախադասության մեջ (և անկախաբար), արտացոլո՞ւմ են, արդյոք, նյութական աշխարհի որևէ օրյեկտիվություն. բովանդակություն ունեն՝ դա պարզ է, այնպես այդ բառերը (նաև հասկացությունները) չէին լինի, չէին ըմբռնվի հայ մարդու կողմից ճիշտ այնպես, ինչպես, օրինակ, «ոյա» ձայնախումբը: Սակայն նույնքան էլ ակնառու է, որ, ինչպես «այո»-ի, այնպես էլ «ավաղի» բովանդակության մեջ ոչինչ չկա այն ամենից, ինչ նյութական աշխարհին է պատկանում՝ գոյերի, որակական ու քանակական մեծությունների, պրոցեսների և կամ մի այլ ձևով: «Այո»-ի բովանդակությունը սուբյեկտի դատողական վերաբերությունն է՝ օրյեկտների ֆանակական ու ուրակական մեծությունների, պրոցեսների և դրանց սուբյեկտիվորեն ընկալված կապերի (ստորոգումների, պարագայական և այլ հարաբերությունների) ամբողջականության վերաբերյալ: «Ավաղ»-ը նույնի վերաբերմամբ զգայական վերաբերություն է. ուրեմն՝ «այո»-ի և «ավաղ»-ի տարբերությունը միայն զգացականի և տրամաբանականի տարբերությանն է հանգում, իսկ ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ ունեն սուբյեկտիվ բովանդակություն: «Այո»-ն («ավաղը») երբեք նախադասության անդամ լինել չի կարող հենց այն պատճառով, որ այն դատողական վերաբերություն է մտքի վերաբերյալ. պրոցեսներ (և դրանց առնչակցություններ) տեղի են ունենում սուբյեկտից դուրս, օրյեկտիվ աշխարհում (սուբյեկտի մեջ տեղի ունեցող

<sup>15</sup> А. И. Зарецкий, Русский язык в школе, 1940, стр. 21.

բիոլոգիական և մտավոր պրոցեսներն էլ, հասկանալի պատճառով, նույնպես «ես»-ի ուրս, արտաքին աշխարհի պրոցեսներ են), ուստի և սուբյեկտիվ ապրումը (դատողական և զգացական) միայն վերաբերմունքի արտահայտություն կարող է լինել դրանց վերաբերյալ:

«Այո»-ն և «ոչ»-ը հայ քերականության մեջ համարվել են մակբայներ, իսկ ուսերենում՝ խոսքի մասնիկներ (ЧАСТИЦЫ): Միայն վերջերս Ս. Աբրահամյանը «Ժամանակակից հայերենի շեքվող խոսքի մասերը» աշխատության մեջ ընդհանրացնելով Ա. Աբրահամյանի, Ռ. Իշխանյանի և այլոց դատողությունները այսպես կոչված «եղանակավորող բառերի» մասին՝ միանգամայն հիմնավոր կերպով ապացուցեց, որ մակբայներից տարբերվում են այն բառերը, որոնք ոչ թե դրվում են հատկանիշը ցույց տալու համար, այլ որոնցով խոսողն իր վերաբերմունքն է արտահայտում այս կամ այն իրողության նկատմամբ»<sup>16</sup>:

Այժմ մի քանի խոսք ձայնարկության մասին. «Ափսոս, ես, անշուշտ, կգայի քեզ հետ» — եթե «անշուշտ» մտքին հաղորդել է դատողական վերաբերություն, ապա ափսոս-ն էլ զգացական վերաբերություն է հաղորդել. ինչպես առաջինում, այնպես էլ երկրորդում չկա ոչինչ արտաքին աշխարհից, երկուսն էլ սուբյեկտիվ ապրումի ակտ են և անպայմանորեն առնչվում են դատողությանը ու այդ հարաբերությունից դուրս անմտածելի են: Այսպես՝ «քար» բառով մենք նշում ենք արտաքին աշխարհի մի օբյեկտ՝ անկախաբար որևէ դատողությունից, սակայն «ափսոս» բառը (ինչպես և «այո»-ն) ենթադրում է մի դատողություն, որին պիտի վերաբերեն. օբյեկտ-սուբյեկտի հարաբերությունից դուրս ձայնարկություններն ու տրամարկությունները (մենք այսպես ենք վերակոչում «եղանակավորող բառեր» խոսքի մասը՝ ի նկատի ունենալով ձայնարկության հետ նրա «հոգեհարազատությունը» և, մանավանդ, այդ հասկացության բնութագրող ամբողջականությունը):

Իսկ ինչ են ցույց տալիս «և», «որ», «որովհետև», «որպեսզի», «բայց», «շնորհիվ» և նման բառերը. կարելի՞ է, արդյոք, վերանալով ձևաբանական և, հատկապես շարահյուսական առանձնահատկություններից, բնութագրել դրանց խոսքի մասային սահմանները՝ իմաստի ընդհանրության հիմքով:

«Գայլն ու շունը ցեղակիցներ են», այս նախադասության մեջ «ու» դրված լինելով «գայլ» և «շուն» բառերի միջև, հարաբերում է դրանց բովանդակությունները՝ սուբյեկտի դատողության սահմաններում: Հիշյալ կենդանիները զգայական ընկալման ենթակա են առանձին-առանձին, իսկ նրանց կապը, որն օբյեկտիվ է ցեղակցության իմաստով, զգայական ընկալման շենթարկվելով, սուբյեկտին է տրվում մտացի վերլուծմամբ, որը և սուբյեկտիվ ապրումի ակտ է բացառապես: Այստեղից էլ մենք չպետք է շփոթենք իրերի և երևույթների միջև եղած այն կապը, որ առարկան է դիտելակալի քննությանը՝ այն կապի հետ, որն իր արդարացումն է գտնում լեզվի մեջ՝ որպես «լեզվական-իմացաբանական» կատեգորիա:

Ուրեմն՝ «ու»-ի բովանդակությունը սուբյեկտիվ է. նրանում չկա ոչինչ օբյեկտիվ աշխարհից:

«Առանց գրքի գնացի դեպի տուն» նախադասության մեջ «գիրք», «գնալ», «տուն» բառերով մենք արտապատկերում ենք օբյեկտիվ գոյեր, պրոցես, որոնք առնված են սուբյեկտիվ (զգայական և տրամաբանական) ապրումի եզակի ակտի ոլորտը, «առանց» բառով՝ նշում ենք «գիրք» բառի բովանդակության և իմ անձնավորության հարաբերությունը՝ սուբյեկտիվորեն: Օբյեկտիվ է, իհարկե, որ ես առանց գրքի եմ գնացել, բայց դրա (գրքի) բացակայության նկատելը սուբյեկտիվ զգացողություն է. «առանցը» տեսանելի չէ, «հասկանալի է»:

«Դեպի» բառով մենք նշում ենք գործողության ուղղությունը, որի (ուղղության) որոշումը նույնպես կապված է սուբյեկտից ու դրա («դեպի» բառի) մեջ նույնպես չկա օբյեկտիվ որևէ բովանդակություն:

Վաղուց նկատված է, որ կապերի ու շաղկապերի դերը լեզվի մեջ հարաբերություններ ցույց տալն է, և որ կապերն առանձնապես ցայտուն կերպով են դրսևորում իրենց մերձավորությունը հոլովական վերջավորությունների հետ. իսկապես, եթե ասենք, սեռական հոլովի «ի» վերջավորության բովանդակությունը մտացի կայունացնենք պատկանելիության հարաբերության մեջ, հեշտ կլինենք այն առանձին բառի և նույնիսկ պատկանելիություն ցույց տվող հասկացության տեղ դնել, կապերի, շաղկապների և հոլովական ու խոնարհումների վերջավորությունների միջև տարբերությունը սոսկ նրանումն է, որ վերջիններս տակավին չեն անջատվել բառերից և չեն ընդունել բառային տեսք, կամ էլ, ընդհակառակը, առաջինները չեն միացել բառերին և կորցրել իրենց բառային տեսքը:

16 Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շեքվող խոսքի մասերը, էջ 219:

Վերջին դատողությամբ բնավ չենք պնդում, թե այդ պրոցեսները անհրաժեշտություն են, սակայն աշխարհի տարբեր լեզուների (ինչպես և հայերենի) լեզվական իրողությունները հաստատում են, որ դրանք խորթ չեն լեզուներին և սրանց զարգացման առանձին աստիճաններում հաճախակի են տեղ գտնում:

Խոսքի մասերի դասակարգման առաջադրված սկզբունքի վերը շարադրված քննությունը մեզ հանդեպնում է հետևյալին. բառերի մի շարք խմբեր, ունենալով օբյեկտիվ բովանդակություն, կազմում են ամեն մի մտածողության նյութը. միտքն ասելու համար պետք է լինեն արտաքին աշխարհի գոյերի, պրոցեսների, քանակական ու որակական մեծությունների արտապատկերումներ, որոնց կապերի ու հարաբերությունների բացահայտումն էլ հենց մտածությունն է. Բառերի մի շարք խմբեր էլ հիշյալ կապերի ու հարաբերությունների դրսևորման միջոցները լինելով՝ ունեն սուբյեկտիվ բովանդակություն: Այստեղից էլ օբյեկտիվ բովանդակության բառերը (խոսքի մասերը) կազմում են մտքի անդամների (նախադասության անդամների) իրացման խումբը, իսկ սուբյեկտիվ բովանդակության խոսքի մասերն էլ՝ դրանց զանազան հարաբերությունների և վերաբերությունների արտահայտման խումբը (շարահյուսական միջոցների):

Անբնիշտ կենդանի խոսքից և գոյության կովանները գտնելով միայն նրանում՝ սուբյեկտիվ բովանդակության խոսքի մասերը (ինչպես նաև բոլոր մյուսները) մարդկային մտքի երկարատև ջանքերի շնորհիվ դարձել են հարաբերություններ ու վերաբերություններ բովանդակող վերացարկումներ (աբստրակցիաներ), որոնց խոսքի մասային արժեքները բնութագրվում են հենց այդ վերացարկումների յուրահատկություններով և ոչ կենդանի խոսքի մեջ խաղացած նրանց դերով, քանի որ այդ դեպքում (կենդանի խոսքի մեջ) բառը, անհրաժեշտաբար, իջնում է վերացականից դեպի մասնավորը, եզակին, զգայականը, «իջնում է դեպի պրակտիկան» (Լենին):

Այսպիսով՝ օբյեկտիվ բովանդակության խոսքի մասերը նյութական աշխարհի աբստրակտ արտացոլումներն են, իսկ սուբյեկտիվ բովանդակությունը՝ հարաբերությունների, վերաբերությունների աբստրակցիաներ. իրենց այսպիսի ընդհանրություններով էլ առաջինները կենդանի խոսքի մեջ կոնկրետանում են նախադասության անդամների, երկրորդները՝ դրանց հարաբերությունների արտահայտման ֆունկցիաներով:

Երրորդ խումբը բովանդակությամբ միասեռ չէ. լեզվական-իմացաբանական պրոցեսում մարդն ստեղծել է նաև բառեր, որոնք, մտավոր ջանքերի խնայողության միտումներով, ինքնին ձուլել են օբյեկտ-սուբյեկտը միասնական մի ձևի մեջ՝ ծնունդ տալով դեռանուններին:

Մենք, անշուշտ, չենք պնդում, թե դերանունները լեզվական-իմացաբանական ավելի ուշ ժամանակների գոյացումներ են, քանի որ բացառված չէ այն հնարավորությունը, որ դրանք կարող էին ձուլվածաբար հանդես գալ լեզվաստեղծման հենց առաջին ակտում: Խոսել (ուրեմն և մտածել) նշանակում է օբյեկտիվ աշխարհն առնել արտացոլման ակտիվ ոլորտը, իսկ վերջինս (ակտիվությունը) բխում է սուբյեկտից...

Քերականագիտության մեջ խոսքի մասերի Լրկու մեծ ստույգաբանումներ են ճանաչված՝ նյութական բովանդակության (знаменательные) և ձևական կամ նյութական բովանդակություններից գուրկ (служебные): Առաջին կարգը բնութագրված է դրա մեջ մտնող բառային խմբերի էլ ավելի մեծ վերացարկումով (բոլոր խմբերում էլ արտահայտվող նյութականությունը, որ պետք է հասկանալ օբյեկտիվության իմաստով), երկրորդ կարգը, սակայն, պարզ հակադրության մեջ դրվելով առաջինին՝ չի բնութագրված. ասել՝ թե մեր առաջ կանգնած կենդանին գալ էլ, տակավին չի նշանակում որոշել նրա էական հատկանիշը: «Մարդը հասարակական կենդանի է», «կապիկը հասարակական կենդանի չէ». առաջին դատողությամբ բնութագրված է հասկացությունը (մարդը) նրա էական հատկանիշով, նույն հատկանիշի՝ կապիկի մոտ բացակայության փաստի արձանագրումը չի բնութագրում այդ կենդանուն. սա պարզ է. սակայն նույնքան էլ ընդունելի պիտի համարվի այն, որ «նյութական բովանդակությունից գուրկ» դատողությունը ոչինչ չի ասում խոսքի մասերի այդ խմբի ընդհանրական հատկանիշի մասին: Նյութական բովանդակություն չունեն, հապա ի՞նչ բովանդակություն չունեն. ո՞չ մի...:

Այսպիսով, աշխարհընկալման միջոց ծառայելով լեզվի ողջ բառապաշարը անհրաժեշտաբար իր ներսում որակական հետևյալ հիմնական տարրերակումներն ունի.

ա) բառերի խումբ, որ օբյեկտիվ աշխարհի առարկաների, քանակական ու որակական որոշակիությունների, պրոցեսների տարրերակման համար ծառայող վերացարկված արտապատկերումներ են անվանապես (գոյական, թվական, ածական, բայ, մակբայ):

բ) բառերի մի խումբ, որ օբյեկտիվ աշխարհի օբյեկտների քանակական ու որակական որոշակիությունների, պրոցեսների վերացարկված արտապատկերումներ են զգայապես (դերանուններ):

դ) բառերի մի խումբ, որ արտաքին աշխարհի առարկաների քանակական ու որակական մեծությունների, պրոցեսների օբյեկտիվ կապերն ու հարաբերությունները նշելու համար ծառայող վերացարկումներ են (կապ, շաղկապ)։

դ) բառերի մի խումբ, որ օբյեկտիվ աշխարհի առարկաների, քանակական ու որակական մեծությունների, պրոցեսների և դրանց կապերի ու հարաբերությունների նկատմամբ սուբյեկտի զգացական ու դատողական վերաբերմունքի դրսևորման համար ծառայող վերացարկումներ են (տրամարկություն, ձայնարկություն)։

Ինչպես տեսնում ենք՝ լեզվի բառապաշարի դասակարգման այս սկզբունքի մեջ ելակետ է ընդունված մտածողության միջոցով աշխարհի արտացոլման հնարավորությունների առանձնահատկությունների հաշվառումը, որն իր արտահայտությունն է գտնում բառերի որակական տարբերակման անհրաժեշտությամբ, և որից էլ բխում են դրանց (բառերի) ֆունկցիոնալ կիրառության առանձնահատկությունները, իսկ վերջիններս էլ իրենց արտահայտությունն են գտնում կոնկրետ լեզվական իրողություններում։

Բառերի հիմնական այս խմբավորումներից առաջինում ներառվում են այսպես կոչված «նյութական բովանդակության» խոսքի մասերը, որոնք յուրաքանչյուր լեզվում ծառայում են կենդանի խոսքի կառուցման «նյութական բազան», մտքի ու նախադասությունների անդամների «շտեմարանը»։

Երկրորդ խումբը, երկրորդ խումբը, կենդանի լեզվին նույնպիսի ծառայություն մատուցելով, դրսևորում է նաև հարաբերությունների, վերաբերությունների արտահայտման ֆունկցիա (դերանունների՝ շաղկապի դերով հանդես գալը), որ բխում է արտաքին աշխարհը սուբյեկտիվ պրիզմայով արտապատկերելու առանձնահատկությունից։

Բառերի երրորդ խումբը, քերականական այլևայլ միջոցների հետ (ինչպես օրինակ՝ ինտոնացիան), ծառայում է խոսքին զգացական ու դատողական վերաբերություններ հաղորդելուն, առանց որի խոսքը կդառնար օբյեկտիվ աշխարհի «լուսանկարը», բայց ոչ «գեղանկարը»։

Նվ, վերջապես, բառերի չորրորդ խումբը, նույնպես քերականական այլ միջոցների հետ (օրինակ՝ հոլովում, խոնարհում և այլն) ծառայում է կենդանի լեզվին որպես խոսք կառուցելու միջոց՝ նշելով կապեր և հարաբերություններ։